



«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» 07 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

 Լ. Թունյան

ՍՑ-ԳԲԽ 16/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.09.2013թ. N 1/1.2/10782-13 գրությամբ ներկայացված «Անգել» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00881766) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.09.2013թ. N 1/1.2/10782-13 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Անգել» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.09.2013թ. N 1/1.2/10782-13 գրությամբ Կենտրոն է ուղարկել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.09.2013թ. գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «Անգել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 01.10.2013թ. N 09/032-1380 գրությամբ դիմել է «Անգել» ՍՊԸ-ին:

Ընկերությունը Կենտրոնին հասցեագրված 12.10.2013թ. գրությամբ հայտնել է, որ «Անգել» ՍՊԸ-ն 03.09.2013թ. վճարել է 105.000 ՀՀ դրամը՝ կատարելով իր հարկային պարտավորությունները և այդ պահից Ընկերությունը ունի միայն կատարված գերավճարներ, սակայն Ընկերության կողմից կատարված վճարումը հարկային տեսչության էլեկտրոնային էջում գրանցվել է 04.09.2013թ.:

«Անգել» ՍՊԸ-ն գրությանը կից ներկայացրել է վճարման հանձնարարագրերի պատճենները:

«Անգել» ՍՊԸ-ն, պաշտոնա ծանուցված լինելով ՍՅ-ԳԲԽ-16/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել վերոհիշյալ հանձնաժողովի նիստին:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 09.09.2013թ. գրությամբ ներկայացրել է «ՀՀ ԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների և Պատվիրատուի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Նոր Նորքի հարկային

տեսչությանը ուղղված հարցումների և դրանց վերաբերյալ ստացված պատասխանների պատճենները:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-16/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել վերոհիշյալ հանձնաժողովի նիստին:

4. ՍՑ-ԳԲԽ 16/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 09.09.2013թ. N 1/1.2/10782-13 գրությամբ ներկայացված «Անգել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 03.09.2013թ. հայտ է ներկայացրել նաև «Անգել» ՍՊԸ-ն:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 87-րդ կետը՝ Պատվիրատուն 03.09.2013թ. թիվ 1/18-2/[443228]-13 գրությամբ դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Նոր Նորքի հարկային տեսչություն՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն «Անգել» ՍՊԸ-ի 2013թ. սեպտեմբերի 3-ի դրությամբ (հայտը ներկայացնելու դրությամբ) Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքեր ունենալու վերաբերյալ:

3. Ի պատասխան Պատվիրատուի հարցմանը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Նոր Նորքի հարկային տեսչությունը 03.09.2013թ. N 30-2/[443600]-13 գրությամբ հայտնել է, որ «Անգել» ՍՊԸ-ն 03.09.2013թ. դրությամբ

ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն եկամտային հարկի գծով՝ 103513 ՀՀ դրամի չափով և 492.500 ՀՀ դրամի չափով գերավճար (այդ թվում՝ շահութահարկի գծով 10250 ՀՀ դրամ, ԱԱՀ-ի գծով 482250 ՀՀ դրամ, որը առաջացել է 06.07.2013թ. ՀՏ ներկայացված 2013թ. առաջին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկի ճշտման արդյունքում):

4. Պատվիրատուն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Նոր Նորքի հարկային տեսչությանն ուղղված 03.09.2013թ. N 1/1.2[443632]-13 գրությամբ խնդրել է պարզաբանել, թե գրության մեջ հիշատակված գերավճարները ժամկետանց պարտավորության գումարների հետ ենթակա են հաշվանցման հարկատուի կողմից համապատասխան առաջարկություն ներկայացվելու դեպքում, թե ավտոմատ եղանակով:

5. Ի պատասխան Պատվիրատուի հարցմանը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Նոր Նորքի հարկային տեսչությունը 04.09.2013թ. N 30-2/[444112]-13 գրությամբ հայտնել է, որ Նոր Նորքի ՀՏ-ում հաշվառված «Անգել» ՍՊԸ-ի 03.09.2013թ. դրությամբ առկա գերավճարն ենթակա չէ ավտոմատ եղանակով հաշվանցման ժամկետանց այլ պարտավորությունների դիմաց:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 05.09.2013թ. կայացած նիստում որոշում է կայացվել «Անգել» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ վերջինիս կողմից եկամտային հարկի գծով ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմքով:

Միաժամանակ, Հանձնաժողովը առաջարկել է Պատվիրատուի ղեկավարին վերը նշված տեղեկատվությունը տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին:

5. ՍՑ-ԳԲԽ 16/15 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.09.2013թ. N 1/1.2/10782-13 գրությամբ ներկայացված

փաստաթղթերը, «Անգել» ՍՊԸ-ի 12.10.2013թ. գրությունը, Ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 125-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Այսպիսով, «Անգել» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու դրությամբ (այն է՝ 03.09.2013թ.) ունեցել է ժամկետանց պարտավորություններ եկամտային հարկի մասով՝ 103513 ՀՀ դրամի չափով, ինչի պայմաններում Ընկերությունը, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չունեցող մասնակցելու գնումների ընթացակարգերին:

Մինչդեռ Ընկերությունը ՀՀ ԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 03.09.2013թ. հայտ ներկայացնելով՝ փաստորեն հավաստել է, որ

Ընկերությունը իրավունք ունի մասնակցելու գնումների ընթացակարգերին, ինչը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ եկամտային հարկի մասով ժամկետանց պարտավորություններ ունենալու պայմաններում Ընկերության կողմից հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 09.09.2013թ. N 1/1.2/10782-13 գրությամբ «Անգել» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00881766) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝



Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՅ-ԳԲԽ 16/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Վարդանյան